

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՔՐԻՍՏԻՆԱ ԼԱԵՐՏԻ ՂԱԶԱՐՅԱՆ

ԽՈՐԻՆԵ ԻԿԱՍԱՆ և ԼԱՏԻՆԱԱՄԵՐԻԿՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՊԸ

**Ժ.01.07-«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂԱԱԳԻՐ

ԷՌԵՎԱՆ-2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ՅԵՆՐԻԿ ԱՆՏՈՆԻ ԷՂՈՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԿԱՐԼԵՆ ՌԱՖԱՅԵԼԻ ՄԱՏԻՆՅԱՆ

բանասիրական գիտությունների
թեկնածու

ՏԱԹԵՎԻԿ ՍԵՂՐԱԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Հայ-ռուսական /սլավոնական/ համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի ապրիլի 29-ին՝
ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ Ս. Աբեղյանի գրականության ինստիտուտում գործող Հայ և
արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Ս. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թվականի մարտի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների թեկնածու՝



Սիրանուշ Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքը նվիրված է լատինաամերիկյան գրականության կարևոր շրջափուլերից մեկի՝ 20-րդ դարի 20-30-ական թվականների սոցիալական վեպին և այդ գրական փուլի նկատելի դեմքերից էվախորոցի գրող Խորխե Իկասայի ստեղծագործության ուսումնասիրությանը: 20-րդ դարի սկզբին ձևավորվում է լատինաամերիկյան վեպի առաջին ինքնատիպ գեղարվեստական համակարգը¹: Ինքնահաստատման և ապագայի հեռանկարների ուղեգծումը դարաշրջանի յուրաքանչյուր գրողի նպատակը դարձավ: Բազմաթիվ գրողներ, այդ թվում նաև Խորխե Իկասան, իրենց ստեղծագործությունների միջոցով փորձեցին պատկերել մայրցամաքի արմատական սոցիալական հակասությունները և տեղաբնիկ ցեղերի ողբերգական իրականությունը: Վերջին թեման լուսաբանող հնդկացիական վեպերը դրսևորեցին լատինաամերիկյան սոցիալական վեպի առանձնահատկությունները և միտումները:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

20-րդ դարի 20-30-ական թվականների լատինաամերիկյան գրականության հարցերին հայ քննադատական միտքը համարյա չի անդրադարձել: Այս իմաստով ատենախոսության թեմայի ընտրությունն արդիական է առաջին անգամ հայ ընթերցողի դատին են հանձնվում Խորխե Իկասա գրողի ստեղծագործության, մասնավորապես վիպագրության համակարգային վերլուծությունը, ինչպես նաև 20-րդ դարի 20-30-ական թվականների լատինաամերիկյան սոցիալական վեպի միտումների, թեմատիկ բազմազանության բացահայտումը, ինչն օգնում է ամբողջացնելու իսպանալեզու վեպի մասին պատկերացումների համակարգը:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ երևան է հանում հարյուրամյա վաղեմության լատինաամերիկյան անցյալի պատկերը, մայրցամաքի բնակչության խնդիրները, և այս առումով պատմագրական նյութի արժեք է ստանում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան Խորխե Իկասայի վեպերն են լատինաամերիկյան սոցիալական վեպի համապատկերում: Աշխատանքի նպատակն է ներկայացնել լատինաամերիկյան սոցիալական վեպի առանձնահատկությունները, հնդկացիական վեպի դերը և նշանակությունը սոցիալական վեպի համատեքստում՝ Խորխե Իկասայի ստեղծագործությունների օրինակով: Աշխատության խնդիրն է ցույց տալ Իկասայի ստեղծագործության հետագիծը՝ մեկնաբանելով նրա անցումը սոցիալական վեպից հոգեբանական վեպի:

ԴԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Խորխե Իկասայի ստեղծագործությանը և լատինաամերիկյան սոցիալական վեպի ուսումնասիրությանն անդրադարձել են ռուս և արտասահմանյան նշանավոր

¹Земсков В., Аргентинская поэзия гаучо: к проблеме отношений литературы и фольклора в Латинской Америке, Москва, Наука, 1977, стр. 115.

գրականագետներ Վ. Կուտեյշիկովան, Լ. Օսպովատը, Ս. Մամոնտովը, Ռ.Ֆլորես Խարամիլյոն, Խ. Գառոն, Է. Օխեդան և այլոք: Ինչ վերաբերում է հայ քննադատական մտքին՝ Խորխե Իկասայի ստեղծագործությունն առհասարակ քննության առարկա չի դարձել, իսկ լատինաամերիկյան սոցիալական վեպի առանձնահատկություններին հպանցիկ անդրադարձ կարող ենք գտնել «Արտասահմանյան գրականության պատմություն (Ետհոկտեմբերյան շրջան)» գրքում²:

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ Խորխե Իկասայի ստեղծագործություններից կատարվել են առանձին ուշագրավ կտորների առաջին թարգմանությունները, նրա վիպասանությունը համակարգային հետազոտության է ենթարկվել, ընդ որում՝ վերլուծական դաշտն իբրև համաբնագիր ընդգրկում է լատինաամերիկյան սոցիալական վեպի զարգացման գործընթացը 20-րդ դարի 20-30-ական թվականներին:

ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատության մեթոդաբանական հիմքերը վերլուծական, պատմահամեմատական և համադրական սկզբունքներն են: Խնդիր է դրվել հանգամանալից վերլուծության ենթարկել Խորխե Իկասայի վիպասանական արվեստը, նրա գեղարվեստական համակարգի և տվյալ ժամանակաշրջանի լատինաամերիկյան սոցիալական վեպի համեմատական քննությամբ բացահայտել ընդհանրությունները, անցումը սոցիալական թեմայից հոգեբանական խորացման և ստեղծագործության հերոսների անհատականացման:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը կարող է օգտակար լինել բանասիրական ֆակուլտետի ուսանողների, լատինաամերիկյան գրականության պատմության ուսումնասիրողների համար:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ և ՀՐԱՊՈՐՏԱԿՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնում:

Ատենախոսության հիմնադրույթներն հրապարակվել են ԲՈՂ-ի կողմից ընդունելի ամսագրերում և պարբերականներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը կառուցված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

²Տե՛ս Անդրեա Լ., Արտասահմանյան գրականության պատմություն (Ետհոկտեմբերյան շրջան), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1985, էջ 773-774:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ քննության են առնվել և ներկայացվել թեմայի մշակվածությունը, արդիականության հարցը և հետազոտության խնդրադրումները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԼԱՏԻՆԱՄԵՐԻԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՊԸ

1.1. ԼԱՏԻՆԱՄԵՐԻԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՊԻ ԱՌԱՆՁՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լատինաամերիկացիների համար 20-րդ դարի 20-30-ական թվականները հոգևոր և մշակութային վերելքի շրջան էին: Ազգային նպատակները համագեցրին ինքնաճանաչողության և ինքնագիտակցության գաղափարներին, ասել է թե՛ սեփականը ի հայտ բերելուն և ցույց տալուն: Ազգաբնակչությունը, որը մինչ այդ շատ գրողների համար անդեմ մի զանգված էր, սկսեց հստակ ներկայացնել իր պահանջները և աստիճանաբար վերածվեց գեղարվեստական գրականությունից շատ թե քիչ տեղյակ հասցեատիրոջ: Այս գաղափարը դարձավ կարգախոս, և գրականության նպատակը ոչ թե իրականության մակերեսային պատկերումն էր, այլ ճգնաժամ ապրող լատինաամերիկացիների ինքնահաստատման և ապագայի հեռանկարների ուղեգծումը, որի նկարագիրն ու լուծման ուղիները մտահոգում էին դարաշրջանի լատինաամերիկացի յուրաքանչյուր գրողի:

Ինչպես նշում է Մարիո Վարգաս Լյոսան, «Լատինաամերիկյան գրողները դադարում են նմանակել եվրոպական հեղինակներին և այժմ, լի հույսերով, արտացոլում են իրենց իրականությունը: Գեղարվեստական տեսանկյունից այդ գրողները դեռ փոխառնում են օտար ձևեր, բայց նրանց ստեղծագործությունների մեջ արդեն նկատելի է թեմատիկ ինքնատիպություն»³:

Գաղափարական և հասարակական տարբեր հանգանակների գեղարվեստական իրացումը համապատասխանում էր գեղագիտության և խոսքի նոր մեթոդների որոնման պայմաններին: Այսպես, օրինակ, վեպի որոշ կերպարներ, ինչպիսիք են «գաուչոյի», «չլույայի» գրական կերպարները, դարձան ոչ միայն հասարակական ծանրակշիռ ուժ, այլ նաև ազգային արժեք: Լատինաամերիկացիների գաղափարական նոր հարցադրումների իրացումը հանգեցրեց հոգևոր և առօրյա փաստերի գիտակցմանը գրականության միջոցով: Այդ տասնամյակների լատինաամերիկյան վեպը սկսեց իրականությանն ուղղված նոր քայլեր կատարել:

Գրական ստեղծագործությունների հետ գրեթե մեկտեղ լույս տեսան բազմաթիվ տեսական աշխատություններ՝ նվիրված դարասկզբի լատինաամերիկյան վեպի ուսումնասիրությանը: Այդ ուսումնասիրությունների հեղինակների մեծամասնությունը տարբեր կերպ է մոտենում շատ հարցերի, լատինաամերիկյան վեպի պարբերացումներին և դասակարգման տարբեր համակարգերին: Բավական տարածված էր վեպերի բաժանումը ըստ թեմատիկ սկզբունքի՝ հակահիմպերիալիստական, հնդկացիական, բնության մասին և այլն: Մյուս կողմից՝ փորձեր են արվում որոշելու վեպերի գեղարվեստական մեթոդը. այս դեպքում առաջադրվում են նաև անհասկանալի ձևակերպումներ՝ «կրելիզմ»,

³Варгас Льеса М., “Примитивный” и “Создающий” роман в Латинской Америке, Критика современного ибероамериканского романа, Мехико, 1973 (Մեջբերումը ըստ **Осват Л. Кутейщикова В.**, Писатели Латинской Америки о литературе, Москва, Радуга, 1982, стр. 94-95).

«ռեզիդնալիզմ», «սուպերռեզիդնալիզմ»: Լ. Ա. Սանչեսը վեպերը բաժանում է մի քանի տասնյակ խմբերի, ինչը անխուսափելիորեն տանում է կոպիտ սխեմատիզմի:

«Ըստ էության գիտական և քննադատական գրականության մեջ 20-րդ դարի 20-30-ական թթ. լատինաամերիկյան վեպը ստացավ «սոցիալական վեպ» սահմանումը»⁴:

Վեպի պատկերման միջոցները հիմնականում ռեալիստական էին, ռոմանտիզմի որոշ տարրերով՝ որպես 19-րդ դարից մնացած ժառանգություն: «Ռոմանտիզմի գեղարվեստական հնարները, միախառնվելով մերկ ռեալիստական, հաճախ նաև սոցիալական հակասությունների նատուրալիստական պատկերումներին, վերստեղծում են ազգային յուրահատկությունները: Չզոր սիմվոլիկ կերպարները համագոյակցում են ամենօրյա պրոզայիկ աղետների հետ, բնության վեմնաշուք պատկերները՝ կյանքի մրուրից վերցրած չափազանց գեղամաքարշ կոնֆլիկտների հետ»⁵: Նորացման եզակի փորձերը թերևս լեզվական բնույթի էին՝ հիմնված էթնիկ լեզվական տարրերի ներառման վրա: Բայց, այս շրջանի վեպն ամենից առաջ վեպ է «հողի մասին»: «Հող» բառը որոշում է բազմաթիվ ստեղծագործությունների գործողության վայրը: Անսահման հարստություն և կենսատու միջոցներ թաքցնող հնդկացիական լայնարձակ տարածություններում ծավալվում են սուր, ողբերգական կոնֆլիկտներ, որտեղ բնության ահռելի, ամենակործան ուժը միախուսվում է զավթիչների դաժանության հետ: Այս շրջանի վեպը նորովի է բացահայտում դեռ 19-րդ դարից մնացած «քաղաքակրթություն-բարբարոսություն» բախումի խնդիրը, որը 20-30-ականներին դիտարկվեց առավել ժամանակակից կոնֆլիկտների տեսանկյունից՝ համապատասխան այն պայքարին, որ վարում էին լատինաամերիկյան ժողովուրդները գաղութատիրության, ֆեոդալիզմի և բռնապետության դեմ: Երկու սկզբունքների միջև մղվող միստիկական պայքարին փոխարինելու է գալիս ռեալ գոյություն ունեցող ուժերի բախումը՝ առաջընթացի ու ազատագրության և ռեակցիայի ու ճնշման⁶: Այնուամենայնիվ, 1920-30-ական թվականների գրականության մեջ առավելություն էր տրվում բնական և սոցիալական միջավայրի պատկերմանը, ինչից տուժում էր անհատ կերպարների խոր բացահայտումը: «Ժողովուրդների ողբերգությանը, թշվառ և հալածված զանգվածներին նվիրված գործերում քիչ տեղ էր մնում անհատական դրամաների համար. մեկ մարդու կյանքը ծուլվում է բոլորի ճակատագրին»⁷:

1924թ. հրատարակված՝ կոլումբիացի գրող Խոսե Էուստասիո Ռիվերայի «Անդունդը», 1926թ.՝ արգենտինացի Ռիկարդո Գուիրալդեսի «Դոն Սեզունդո Սոմբրա», 1929թ.՝ վենեսուելացի Ռոմուլո Գայետոսի «Դոնյա Բարբարա» վեպերը բազմաթիվ գրականագետների կարծիքով հանգուցային են գիտակցվում 20-րդ դարի 20-30-ական թվականների լատինաամերիկյան սոցիալական վեպի համապատկերում, ըստ այրմ էլ նպատակահարմար ենք գտել այս ստեղծագործությունների օրինակով տալ սոցիալական վեպի առանձնահատկությունները:

«Ռիկարդո Գուիրալդեսի «Դոն Սեզունդո Սոմբրան» հայացք է դեպի միջակայն անցյալ, և անցյալ-ներկա ժամանակ հակադրությունը մատնանշում է

⁴Кутейщикова В., Роман Латинской Америки в XX веке, Москва, Наука, 1964, стр. 44.

⁵Տե՛ս նույն տեղում, էջ 253-254:

⁶Տե՛ս նույն տեղում, էջ 244-250:

⁷Кутейщикова В., Роман Латинской Америки в XX веке, Москва, Наука, 1964, стр. 255.

երկրում օրեցօր մեծացող սոցիալ-տնտեսական ճգնաժամը»⁸: «Սա ամբողջովին այլաբանական վեպ է՝ սկսած հենց վերնագրից»⁹: Այն պատկերում և ուսուցանում է մի ամբողջ կյանքի էթնիկ արարողակարգ: Վեպի կառուցվածքը գծային չէ, և ստեղծագործության վերջում ընթերցողը հայտնաբերում է, որ սյուժեի հետագիծը լրկ Ֆաբիո Կասերեսի մտահղացումն էր, որի ներկան ամենևին էլ կապ չունի վեպում պատկերված անցյալի հետ՝ այսպիսով վեպը դարձնելով անհետացած իրականության թախծալի հուշատետր: Ռիկարդո Գուիրալդեսի վեպը ստեղծում է գաուչոյի՝ արգենտինական ազգին բնորոշ և ըստ էության արդեն իսկ անհետացած հասարակական-պատմական կերպար, որը շատ հաճախ վառ կերպով հիշատակում են ոչ միայն հեղինակը, այլ նաև գյուղից քաղաք տեղափոխված, օտարման ազդեցության տակ գտնվող տարաբնույթ համրային զանգվածները: «Գաուչոյի խաղաղ, առողջ պարելակերպը հակադրվում է կապիտալիստական մեծ քաղաքների կյանքին»¹⁰: Փնտրելով բարոյական իդեալ՝ արգենտինացի հեղինակը վերստեղծում է բնական, վայրի մարդու կերպարը՝ ճշմարտության, վեհության, տղամարդկության, սիրո, խիզախության, անձնփրկության մարմնավորում, որը հակված էր առաջարկելու դեպի անխուսափելի, անհայտ ապագա տանող հասարակության վրա քաղաքակրթության ազդեցության դադարեցման միջոցներ:

Խոսե էուսասիո Ռիվերայի «Անդունդը» վեպի սկիզբը Ալիսիայի փախուստն է երիտասարդ բանաստեղծ Արտուրո Կովայի հետ՝ ծնողների կամքին հակառակ: Աղջկան հետագայում առևանգում են, և սիրած կնոջ որոնումների ընթացքում գլխավոր հերոսը, «բախվելով դառը իրականության հետ, վերագտնում է իր ինքնությունը: Յեղիմակը, մերկացնելով Արտուրո Կովայի եսասիրական բնույթը, ցույց է տալիս մինչ այդ սնափառությամբ փառքի ձգտող, մանր ինտրիգներով ապրող երիտասարդի վերափոխումը՝ սոցիալական անարդարությունների և ստրկության դեմ պայքարող մարտիկի»¹¹: Սյուժետային այն գծի միջոցով հեղինակը ներկայացնում է վեպի գլխավոր թեման՝ երկրում տիրող ծանր սոցիալական իրավիճակը՝ կաուչուկի տնկադաշտերում աշխատող ստրուկների դժոխային կյանքն ու նրանց գիշատիչ տերերի սարսափելի սանձարձակությունները: Ի տարբերություն «Դոն Սեզունդո Սոմբրա»-ի՝ «Անդունդը» վեպը հասարակական-պատմական գործընթացի օտարման և անորոշ առաջընթացի այլաբանությունն չէ, այլ մոտեցում այդ գործընթացի դաժան իրականությանը և այն որևէ կերպ փոխելու որոշում: Հասարակական-պատմական իրողություններին համահունչ է վեպի շարադրանքը. վեպն իր ուղին է հարթում դեպի իրականություն՝ ներառյալ Արտուրո Կովայի և նրան առնչվող տարբեր կերպարների ճակատագրերը: Եվ «Դոն Սեզունդո Սոմբրա»-ի, և՛ «Անդունդ»-ի հերոսները, ճակատագրական տարբեր վայրիվերումների և փորձությունների միջով անցնելով, գիտակցում են իրենց դերն ու պատասխանատվությունն ի դեմս իրենց երկրների ազգային խնդիրների՝ որոշելով ընդունել հասարակության որոշակի նորմեր: Երկու վեպերն էլ այսպես կենտրոնանում են անհատի գիտակցության ու շարժառիթի վրա՝ որպես նրա սուբյեկտիվ տեսակետի: Ռիվերան բացահայտում է բուրժուական իրականության ծնած շարիքները՝ շահագործումը,

⁸Doub Y., *Journeys of Formation: The Spanish American Bildungsroman*, New York, Peter Lang, 2010, p. 38.

⁹Սոմբրա նշանակում է ստվեր:

¹⁰Гвишиани-Косыгина Л., Основные произведения иностранной художественной литературы: Европа, Америка, Австралия: литературно-библиографический справочник, Москва, Книга, 1980, стр. 313.

¹¹Ривера Х., Пучина, Москва, Художественная литература, 1957, стр. 6.

վայրագությունը, դաժանությունը, և ի տարբերություն Ռոմոլո Գալյեգոսի, որը լավատեսորեն էր տրամադրված դեպի «առաջընթացի» գործընթացը, հույս չէր տածում այդ «առաջընթացին»: Սելվայուն (տափաստան), ուր հայտնվում է Արտուրո Կովան, անողորք պայքար է մղվում քաղաքակրթության և բնության միջև: Այդ վայրի բնության մեջ կոնկիստադորների ժառանգների կողմից թալանվում, կեղեքվում ու սպանվում է վայրի հնդկացին: Վեպուն սելվան հանդես է գալիս մերթ որպես մարմնավորում մետաֆիզիկական բացարձակ չարիքի, որն իշխում է հասարակության մեջ (դա հրեշալին «բարբարոսության» աշխարհն է), մերթ որպես ստրկացված բնություն, «բնական» աշխարհ, որն իր մոգական ուժերով ինքնապաշտպանվում է և վրեժ լուծում մարդուց: Եվ այս դիտակետից սելվայի խորհրդանիշ են դառնում «հնդկացին» և «ծառը», որոնց հանդեպ բռնություն է գործադրվում¹²: Սակայն սելվայի ու նրա դժոխային ուժի այլաբանությունն ավելի շատ են շոշափվում ստեղծագործության մեջ, քան սոցիալական հիմնախնդիրները: Վեպի հերոսները մարդկային հասարակությունից ավելի անողորք բնության զոհն են:

Ռոմոլո Գալյեգոսի «Դոնյա Բարբարա» վեպի հիմքում կնոջ կերպարն է, որը ներկայացնում է ամերիկյան կուսական աշխարհի բռնությունը: Ավանդական պատմության՝ դոնյա Բարբարայի ու Սանտոս Լուսարդոյի միջև հողային վեճերի ետևում թաքնված այլաբանությունը բացահայտում է քաղաքակրթության (ախոյանի սրբությունն ու լույսը) ու բարբարոսության միջև առասպելական պայքարը: Վեպում դոնյա Բարբարան՝ բարբարոսության խորհրդանիշը, մարմնավորում է «թշնամական, մարդուն անհնազանդ բնությունը, ֆեոդալական հետամնացությունը, տգիտությունը, քաղաքական բռնությունը: Իսկ քաղաքակրթության սիմվոլ հանդիսացող Սանտոս Լուսարդոյի կերպարը մարմնավորում է նյութական առաջընթացի, ստեղծարար գործունեություն, արդարության ու ժողովրդավարության գաղափարները»¹³: Նախորդ երկու վեպերում քաղաքակրթությունը համարվում էր անբնական ապրելակերպ, և բնական ապրելակերպի եզրերը որոնվում էին դրա սահմաններից դուրս: «Դոնյա Բարբարա»-ում, ընդհակառակը, բուրժուական քաղաքակրթությունը դառնում է նպատակակետ, և դրան է միտված պատմական զարգացումը, որը հեղինակը կանխատեսում և շարադրում է վեպում: Սրանով Գալյեգոսը հույսով նկարագրում է, թե ինչ է սպասվում հայրենիքին, երբ քաղաքակրթությունը հաղթի բարբարոսությանը: Գալյեգոսի վեպը վերլուծվում է հենց պատմական համատեքստում և արտահայտվում է հասարակական լայն շրջանների զգացած խանդավառությամբ՝ ըստ այսպես կոչված ամերիկյան ուտոպիայի, մինչդեռ քաղաքակրթության նկատմամբ հիասթափությունը, որն ակնհայտորեն նկարագրված է Գուիբալդեսի և Ռիվերայի վեպերում, լատինաամերիկյան վիպասանության մեջ սկսեց իշխել մի քանի տասնամյակ անց: Ստեղծագործությունը դարձավ լատինաամերիկյան առաջին վեպը, որի ընթացքը համահունչ է ժամանակի շարժման (անցյալ, ներկա ու ապագա) գաղափարին: Միևնույն ժամանակ հեղինակը հասկացնում է, որ քաղաքակրթությունը պետք է կապվի ազգային մշակույթի արմատներին, և որ նրա լիակատար զարգացումը պետք է հենց այստեղից էլ սկսվի:

«20-30-ական թվականների արձակը արտացոլում է կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի արմատական սոցիալական հակասությունները, ժողովրդական զանգվածների և առաջավոր մտավորականության զայրույթն ու

¹² Տե՛ս Художественное своеобразие литератур Латинской Америки, Наука, Москва, 1976, стр. 254-255.

¹³ **Мариано А.**, Те кто внизу, Москва, Художественная литература, 1970, стр. 12.

վրդովմունքը գյուղում տիրող ֆեոդալիզմի ճնշող ազդեցության, տնաբույծ բռնակալների, օտարերկրյա, նախ և առաջ հյուսիսամերիկյան իմպերիալիզմի դեմ»¹⁴։ Գեղարվեստական և գաղափարական տեսակետներից վեպը կցկտուր է։ «Բնության տարերքը գեղարվեստական ունիվերսումի կենտրոնն է դառնում, ինչը հանգեցնում է «նարդու գեղագիտական» ժխտման։ Վիպական իրականությունը պարփակված էր, ժամանակը հոսում էր կարծես համաշխարհայինից մեկուսացած, կեցության օրենքները չէին գոյակցում համամարդկային օրենքների հետ»¹⁵։ Փիլիսոփա Միրո Կեսադայի խոսքերով՝ այս շրջանի սոցիալական վեպերն իրականությունը վերարտադրելիս սահմանափակվում էին միմիայն սոցիալական ճնշման, տեղաբնիկների հսկայական զանգվածների շահագործման պատկերմամբ՝ անտեսելով հասարակական կառուցվածքի ընդհանուր պատկերը։

1.2. ԼՍԻՆԱԱՍԵՐԻԿՅԱՆ ՀՆԴԿԱՑԻԱԿԱՆ ՎԵՊԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՊԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Լատինամերիկյան գրականության մեջ սոցիալական վեպի մասնավոր արտահայտություններից են «հնդկացիական վեպ» եզրույթով բնորոշվող ստեղծագործությունները, որոնք ունեն իրենց տարածաժամանակային յուրահատկությունները և հիմք դարձան հետագա շրջանի գրականության նոր որոնումների համար։

Հնդկացին սպիտակամորթի տնտեսության մեջ գործիք էր դարձել, ճանապարհների շինարար, հանքափոր կամ բանվոր կաուչուկատու բույսերի պլանտացիաներում։ Նա ավելի շատ սեփականության մաս էր, քան հասարակության անդամ։ Հնդկացիական հարցի արտացոլումը հասարակական մտքի և քաղաքանության մեջ բավական երկար է քննարկվել և լատինամերիկյան երկրներում ստացել է ինդեանիզմ կամ ինդիխեներիզմ անվանումը¹⁶։

Լատինամերիկյան մի շարք ժամանակակից գրողներ, հնդկացիական ցեղերի շահագործումը համարելով նողկալի երևույթ, այն դարձրել են իրենց վիպական ստեղծագործությունների նյութ։ Մինչև 1890 թվականն ընկած ժամանակահատվածի հնդկացիական վեպերը մեծմասամբ ռոմանտիկական են։ Չնայած տեղաբնիկ կացությանն անդրադառնալուն՝ ինդիխեներիզմը չէր դադարում արևմտյան դրոշմ կրել, և ինդիխեների արձակը բնորոշվում է որպես եվրոպական գրական ժառանգություն։ Ինչքան էլ որ տարբեր են Շատոբրիանի և լատինամերիկյան ռոմանտիկների ստեղծագործական հիմքերը, այնուամենայնիվ նրանց միավորում էին նպատակասլացությունը դեպի անցյալ, քաղաքակրթությունից հեռու «բնության զավակների»՝ հնդկացիների բնական կենսաձևի մեջ իդեալի որոնումները։ Հնդկացիական վեպերի հեղինակների համար սոված, ճնշված հնդկացիների կյանքը ստեղծագործության արժանի քեմա չէր համարվում։ Կենդանի հնդկացին նրան պոետիկ չէր թվում. որպես բարոյականության, արդարության իդեալ՝ նա գոյություն ուներ միայն անցյալում։ Բազմաթիվ հետազոտողներ նշում են, որ այս ստեղծագործություններում հնդկացու

¹⁴Мамонтов С., Испаноязычная литература стран Латинской Америки XX века, Москва, Высшая школа, 1983, стр. 24.

¹⁵Տե՛ս Концепции историко-культурной самобытности Латинской Америки, Наука, Москва, 1978, стр. 165.

¹⁶Տե՛ս Гончарова Т., Индеанизм: Идеология и политика. Боливия, Перу, Эквадор 50-60-годы XX века, Москва, Наука, 1979, стр. 3-8.

իրական կյանքը դուրս է մղված: Կոմետա Մանցոնիի խոսքերով՝ «Այս վեպերում իսպառ բացակայում է հնդկացու ճակատագրի նկատմամբ անհանգստությունը»¹⁷:

Բնիկ ժողովուրդների պատմական անցյալը վերարտադրող, նրանց բնական կենսաձևի մեջ բարոյական իդեալ փնտրող շումանտիկ գրողները մեծ դեր խաղացին լատինաամերիկյան գրականության մեջ: Հնդկացիների մասին գրականության մեջ նոր փուլ բացեց 19-րդ դարի վերջին լույս տեսած՝ Կլորիմոս Մատո դե Տառների «Բնավեր հավերք» գիրքը: Սա այդեն հնդկացու դաժան, ողբերգական իրականության պատկերումն էր: Գրքի լույս տեսնելու տարին (1889) համարվում է սոցիալական ողբերգությունը մերկացնող լատինաամերիկյան ռեալիստական վեպի հիմնավորման սկիզբ:

Նորաստեղծ վեպի շարունակությունը դրսևորվեց XX դարի 20-30-ական թվականներին, երբ մեկը մյուսի հետևից սկսեցին հրատարակվել սոված, լքված, անգրագետ հնդկացիների ողբերգական կյանքը լուսաբանող ստեղծագործություններ: Դրանց թվում էին Ալիդես Արգեդասի «Բրոնզագույն ռասսա», Ալֆրեդ Գիլյեն Պիետոյի «Հնդկացու արցունքներ», Խայմե Սենդոսի «Պոտոսի հողերը», Ռոբերտո Լեյտոնի «Հավերժ թափառաշրջիկներ», Ֆերնանդո Չավեսի «Արծաթ և բրոնզ» գրքերը: Սակայն հնդկացիական վեպի զագաթնակետն են համարվում Խորխե Իկասայի «Ուասիպունգո»¹⁸ և պերուացի գրող Սիրո Ալեգրիայի «Ընդարձակ և օտար աշխարհում» ստեղծագործությունները: Վերջինս լույս տեսավ 1940թ.¹⁹: «Փոխաբերական իմաստով այս վեպը թարգմանվում է «Ընդարձակ, բայց օտար աշխարհում»: Ալեգրիան պայքարում է հենց այդ «բայց»-ի դեմ, պայքարում է հանուն նրա, որ հնդկացին գտնի իր տեղն այդ ընդարձակ աշխարհում»²⁰: Գեղարվեստական տեսանկյունից ստեղծագործության պոետիկ արժանի ոճն հաստատում է նրա գրական արժեքը: Ձևի և բովանդակության միջև գեղեցիկ ներդաշնակությունը ստեղծում է կապակցված ամբողջություն: Վիպասամի համար բավական չէ կարեկցանք կամ նույնիսկ կատաղի մոլեգնություն արտահայտելը հնդկացու տառապանքի և շահագործման նկատմամբ, նա խոր համակրանք է տածում տեղաբնիկի արժանիքների, դրական առանձնահատկությունների, գեղեցիկ կենսակերպի ու հին ավանդույթների հանդեպ: Ամբողջ ստեղծագործությունը համեմված է ժողովրդական պատմություններով: Ալեգրիայի հնդկացիները հաղթահարում են ներկան շնորհիվ բնության հետ ներդաշնակության, բանավոր փոխանցվող ավանդույթների և հավերժության զգացման: Մարդու և նրա միջավայրի միջև գոյություն ունեցող այս հավասարակշռությունն է ներթափանցում վեպի սահմաններ:

Հնդկացիական միկրոկոսմոսն ապրում էր իր բանահյուսական իրականության մեջ, և այդ ժամանակի բախումը մեծ աշխարհի ժամանակին խախտում է հավասարակշռությունը՝ հասցնելով ողբերգության: Երկու աշխարհների ներքին կոնֆլիկտը ձևավորում է նոր բարոյական նորմեր, «փոքր մարդու» խնդիր: Հնդկացիական վեպերի միտումը այդ նոր ողբերգական իրականության պատկերումն էր:

¹⁷ Cometta Manzoni A., El indio en la novella de América, Buenos Aires, Editorial Futuro, 1960, p. 11 (Մեջբերումը ըստ Кутейщикова В., Роман Латинской Америки в XX веке, Москва, Наука, 1964, стр. 188).

¹⁸ Ուասիպունգո (կեչուա լեզվով՝ ուասի՝ տուն, պունգո՝ դուռ)՝ ագարակատիրոջ կողմից հնդկացիների ընտանիքին վարձով տրվող հողակտոր՝ կացարան կառուցելու իրավունքով:

¹⁹ Տես Кутейщикова В., Роман Латинской Америки в XX веке, Москва, Наука, 1964, стр. 187-190).

²⁰ Алегриа С., В большом и чуждом мире, Художественная литература, Москва, 1975, стр. 16.

1.3. ԽՈՐԻՏ ԻԿԱՍԱՆ ԷԿՎԱԴՈՐՅԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԴՆՇՏՈՒՄ

Էկվադորում 20-րդ դարասկզբի առաջին տասնամյակում երկրի ամենակարևոր արտահանվող ապրանքը հանդիսացող կակաոյի գնի անկման հետևանքով տնտեսական ճգնաժամ է ծագում: Դրան գումարվում է քաղաքական քառասյին իրավիճակը, որը ստեղծվել էր 1895թ. Ալվարոյի կազմակերպած հեղափոխությունից հետո երկիրը ղեկավարող ազատական բուրժուաների շրջանում: Այս ամենին արձագանքելու ժողովրդի առաջին քայլը եղավ «բանվորական գործադուլը Գուայակիլում՝ ժողովրդական շարժում, որը 1922թ. նոյեմբերի 15-ին արյամբ կանգնեցվեց...»²¹: «Մի միջավայրում, ինչպիսին սա է, պետք է որ ծաղկեր բողոքի գրականություն, և այդպիսին է Գուայակիլի գրականությունը՝ բողոքի գործը և աներկբա, ցավոտ մի հարված...»²²:

1930-ական թվականին լույս տեսած «Նրանք, ովքեր գնում են» պատմվածքների ժողովածուն էկվադորյան գրականության մեջ նոր դարաշրջանի սկիզբ է դնում: Այս գրքում Գալյեգոս Լարան, Խիլ Խիլբերտը և Ազիլերա Մալտան²³ սկսում են գրական մի շարժում, որը հետագայում կրեթի գնահատելի հաջողությունների: Թեմաները և լեզուն՝ հաճախ կոշտ, անպարկեշտ, բողոքներ առաջացրին ազգային հասարակության մեջ: «Քննարկվող գրքի հեղինակների ստեղծած գրականությունը քաղաքական ծրագրի արդյունք համարվեց, որ ձգտում էր միջազգային աղմուկ առաջացնելու, հեղինակագրկելու հետամնաց միջավայրը՝ բացահայտելով գյուղացու շահագործման անոթալի մանրամասները և բնութագրելով նրան որպես ենթամարդու մի տեսակ, որն ապրում է վավաշուտությամբ, խանդով, ալկոհոլով և ժամանակ առ ժամանակ մարդասպանի բնագրով»²⁴: Վեճերը գրքի շուրջ գնալով սաստկացան, բայց սկիզբը դրված էր, և հաջորդ ստեղծագործությունները դա ապացուցեցին:

Ռեալիզմը՝ որպես գեղարվեստական ձև, հասարակ մարդկանց անկատար և անմշակ լեզուն, սոցիալական դաժան քննադատությունը. սրանք են գլխավոր միտումները, որոնք կզուգորդվեն հետագայում վեպերում:

Հոգևոր վերածննդի մեկ այլ գրական բեղմնավոր կենտրոն դարձավ նաև Կիտոն: «Կիտոյի խումբը» կազմում են Խորխե Ֆերնանդեսը, որը գրեց «Ջուրը», Ումբերտո Սալվադորը՝ «Շախմատ» և «Քաղաքում վեպ են կորցրել» գրքերով, և Խորխե Իկասան: Եթե գաղափարախոսական մակարդակում Խորխե Իկասան հավատարիմ է ընդունված սկզբունքներին, ապա գեղարվեստականում պահպանում է իր ինքնատիպությունը: Նրա տեխնիկան, ոճի թեթևակի կոպտությունն ու այն խորաթափանցությունը, որ տարրորշում է առօրյայում ողբերգականը, միայն իրեն են հատուկ: Իկասան էությանը ազգային գրող է: Նրա ստեղծած կերպարներն են բացահայտում սոցիալական խնդիրները, կերպարներ, որ շարժվում են սարերի ու քաղաքների տխուր համապատկերում՝ հնդկացին, չոլուն, քահանան, ազարակատերը և քաղաքի ձեռնարկատերը, ոստիկանությունն ու պետության ղեկավարը, հանրային ծառայողը: Միևնույն ժամանակ նրա ստեղծագործությունը լեռնային բնապատկերի աղարտման մասին ունեցած իր պատկերացումներն է

²¹Morejón J., Historia de las literaturas del Ecuador, Ecuador, Universidad Andina Simón Bolívar, 2000, p. 123.

²²Rojas A., La novela ecuatoriana, México, FCE, 1948, p. 188-189.

²³Stü Heise K., El grupo de Guayaquil: Arte y técnica de sus novelas sociales, Madrid, Colección Nova Scholar, 1975, p. 33.

²⁴Aguilera Malta A., Siete lunas y siete serpientes, Cátedra, Letras Hispánicas, 2004, p. 25.

ներկայացնում: Իկասան խոր մտորումների մեջ ընդգրկում է գույների ներդաշնակությամբ հարուստ բնության բոլոր երանգներն ու կերպարանքները՝ տափաստանը, անտառը, իջվածքները, բարձրավայրերում մայրամուտների մշուշապատ տխրությունն ու դաշտերի երաժշտության վրայի կիզիչ արևը: Նա բոլոր ստեղծագործություններում էլ շատ հստակ է արտահայտվում, բայց դրանք տարբեր զգացմունքայնություն են պարունակում: Իկասան երևույթները ողբերգական տեսանկյունից է գնում, նախընտրում է տեսնել ցավը, հիվանդությունն ու մահը բնական ուժերի լուսավոր խաղի մեջ. արևը, որը այրում է, ջուրը, որ հարվածում է «հողին, որը կորցրել է իր աչքերը գիշերվա մեջ, կույր հողին է հարվածում, հողին, որ քարացել է ցրտից»²⁵:

«Եկվադորի գրականության պատմության մեջ առաջին անգամ գրական լեզուն «մոռանում է» որոշ կանոններ, որ չլսի իր իսկ հնչերանգը, որ բնատուր ձգտումների ու բուռն ցանկությունների ռիթմին խառնվի, որը անմշակ, կոշտ ու հասարակ է, բայց հավասարաչափ արտահայտիչ, հարուստ ու պատրաստ՝ ընդունելու պոեզիայի թևավոր հպումը»²⁶: Հարցազրույցներից մեկի ժամանակ Իկասան շեշտում է. «Մեզ հաջողվեց կտորել իսպանական մտածելակերպի կարծրատիպը հոգուտ մեր մտավոր ու հուզական աշխարհի ստեղծման: Իսպանաամերիկյան լեզվով ենք խոսում, իսպանաամերիկյան զգացմունքներ ենք ունենում, մենք պետք է մեր գրավոր խոսքը կառուցենք մեր աշխարհին հատուկ արտահայտություններով»²⁷: Իկասայի ստեղծագործությունը հանդես է գալիս այնպիսի հռեռետությամբ, որը մինչ նա անծանոթ էր էկվադորյան գրականությանը: Ավելի խորքային ու ավելի մարդկային է:

Ամփոփելով այս գլուխը՝ ասենք, որ չնայած սոցիալական վեպերում բացակայում է կերպարների հոգեբանական հղկվածությունը, այնուամենայնիվ կան որոշ առանձնահատկություններ, որոնք նորույթ են և կարևոր 20-րդ դարի լատինաամերիկյան վեպի համար. դա տարածքին հատուկ պարզունակ, վայրի ուժն է, կոնկրետ հիմնախնդիրների ներկայացումը, հավաքական կերպարների առկայությունը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԽՈՐԻՆ ԻԿԱՍԱՅԻ «ՈՒՄՍԻՊՈՒՆԳՈ» ՀՆԴԿԱՑԻՎԿԱՆ ՎԵՊԸ

2.1. ՎԵՊԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Իկասան այս գրական ստեղծագործությունը վավերականացրել է որպես սոցիալական մեղադրանք, որով երևան է հանում տեղաբնիկի՝ անօրինականություններով և շահագործումով լի դաժան և անտանելի կյանքը: «Ուսաիպունգո»-ն ընթերցողին հարավամերիկյան այս երկրում տիրող անարդարությունների մասին տեղյակ պահելու և մողեռնացման ճանապարհով ընթացող երկրի սոցիալական և բարոյական արժեքների բացակայությունը ի ցույց հանելու միտումով ստեղծված վեպի նախատիպն է:

²⁵ www.books.google.com, **Jorge Icaza**, Huasipungo, Peru, Ediciones populares, 1950, p. 69.

²⁶ **Ortega A.**, Jorge Icaza, Cuentos completos, Quito, Libresa, 2006, p. 45.

²⁷ **Villagómez A.**, 25 años de Huasipungo, México, Excelsior, 1960, 15 febrero, p. 20.

«Ուսսիպունգո»-ի գործողությունը կառուցվում է սոցիալիստական ուսմունքի ընդհանուր գծերի վրա²⁸ : Եկեղեցու և կառավարության կողմից հովանավորվող կալվածատերը շահագործում է հնդկացուն՝ նրա կյանքն անհնարին դարձնելու աստիճանի. հեղափոխությունն է դառնում միակ ելքը: Սա է վեպի գաղափարախոսական էությունը: Իկասայի վեպի հիմքում ընկած սոցիալ-տնտեսական գործընթացը համընկնում է ամերիկյան ֆեոդալական կարգի քայքայման ժամանակի հետ: Սկզբից մինչև վերջ իկասայական ճարտարապետությանը համահունչ պատկերի տեսակները հետևյալն են՝ ուսսիպունգո՝ բնիկ հնդկացիների կյանքի պատկեր, կալվածք՝ կալվածատերերի կյանքի պատկեր, պետություն՝ հոգևոր ու պետական պաշտոնյաների կյանքի պատկեր և օտար ներդրումներ՝ համաշխարհային կապիտալիզմի պատկեր: Ռասայական և կրոնական արտոնությունները պահպանում են նույն հերթագայությունը. գազաթին են գտնվում ամերիկացիները, նրանցից ներքև կանգնած է կալվածատերն իր ընտանիքով, որին հետևում է եկեղեցին: Սեջտեղում քաղաքականությամբ զբաղվող փոխգնդապետն է և մնացյալ վարչական մարմինները, նախավերջին տեղում են մետիսները, և վերջում միայն՝ հնդկացիները:

Ուշադրություն հրավիրելով այն մոռացվածության, լքվածության և հալածանքների վրա, որ երեկվա և այսօրվա հնդկացու ժառանգությունն են, Իկասան նպատակ ունի ավելի շատ զգացնելու, քան պարզապես ցույց տալու դարեր առաջ նվաճված ցեղի հանդեպ արգահատանքը և նվաճողների սահմանած սոցիալական կարգերի անարդարությունը, կարգ, որը ժամանակի ընթացքում փոխվել է՝ միայն ավելի ու ավելի սեղմելով հնդկացու տառապանքների օղակը: «Ուսսիպունգո»-ն ընթերցողին բացում է դաժան, անվերջ թշվառության պատկերը, որտեղ հնդկացին դողեցրոցքից տառապող շահագործված էակ է՝ կծկված կալվածատիրոջ սադիստ աշխույժի մտրակի ներքո: Հուսահատության հասցնող հանգամանակից պատկերում Իկասան ձև ու գույն է տվել վայրագությունների և անպաշտպանության աշխարհին, որտեղ ընթանում է հնդկացու կյանքը՝ քաղց, ծարավ, հոգնություն, հիվանդություն, մտրակահարություն, մենություն, միշտ մենություն և մահ՝ դրսևորման ամենադաժան ձևերով: Սակայն ստեղծագործության ավարտից դատելով՝ գրողը լուծում է վեպի գաղափարը. ամենացավալի կետը վերջին և մեծագույն անարդարությունն է դառնալու. հնդկացին կարող է տանջվել և համակերպվել ամեն բանի, բայց ոչ իրեն պատկանող հողակտորից՝ ուսսիպունգոյից զրկվելուն:

2.2. ՎԵՊԻ ԿՈՌԻԲԱՎՃՔԱՅԻՆ և ԼԵԶՎԱՌՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ուսսիպունգո»-ն կարճ դրվագների է բաժանվում, որոնցով վեպը նմանվում է կցկտուր տեսարաններով և հատվածներով վավերագրական կինոֆիլմի: Այս կառուցվածքի կիրառումը «Ուսսիպունգո»-ին վավերագրական մեծ արժեք է տալիս և ընթերցողին հաշվարկված թեմաների շարք առաջադրում: Հատվածական այդ շարադրանքը ծառայում է նրան, որ ընթերցողն ուշադրությունը սևեռի ստեղծագործության թեմատիկայի և ոչ թե սյուժեի վրա: Շարադրանքի այս

²⁸Տե՛ս **Ojeda E.**, Ensayos sobre las obras de Jorge Icaza, Quito, Casa de la Cultura Ecuatoriana, 1991, p. 40.

ձևն ակնհայտորեն կապված է երկխոսության հետ, որը հիմնվում է այնպիսի հմարքների վրա, որոնք մեծ մասամբ կենտրոնանում են ստեղծագործության գործող անձանց զրույցների վրա: «Ուսասիպունգո»-ում այնպիսի դրվագ չկա, որտեղ տեղաբնիկի խոսք չհայտնվի: Ընթերցողն անընդհատ հանդիպում է որևէ տեղաբնիկի կամ մետիսի երկխոսության, որը կրում է հիմնականում դառն ու ծանր գոյության շեշտեր²⁹: Հերոսների խոսքերում հույսի նշույլ չկա, գերիշխում են այլաբանական մտքերը, որոնցով տեղաբնիկը շարունակ աղերսում է, Լատիֆունդիստը և մետիսը՝ վիրավորում, քահանան՝ մեղադրում:

Երկխոսության ոճական մեկ այլ կողմը նրա՝ քնարականությամբ օժտված լինելն է, որով վեպը այլ հնդկացիական ստեղծագործությունների նման ամբողջովին կեչուական է դառնում: Քնարական այդ հուզավառությունը «Ուսասիպունգո»-ին բանաստեղծական յուրահատկություն է հաղորդում: Իկասայի հնդկացիների երկխոսությունը պարզ է ու հակիրճ, նրանց բնագոյային կյանքը գովերգող:

Հարկ է ուշադրություն դարձնել այն յուրատեսակ ձևին, որով նկարագրություններն են արվում. նրանց հզոր մի դիմամիզն է շունչ տալիս: Այս առումով «Ուսասիպունգո»-ն Իկասայի ամփոփիչ ստեղծագործությունն է. հնարավոր չէ նրա հետագա վեպերում ավելի էպիկական, ավելի թրթռով լեցուն պատկերներ գտնել, քան այն կարճ վրձնահարվածներով արված պատկերները, որոնք համառոտ տեղեկություններով բնորոշում են էկվադորյան հնդկացու մղձավանջային աշխարհը³⁰:

«...Ամեն բան աղբ է: Ահա փարախի մի դուռ է գալիս՝ ընդվզող ալիքի փրփրոտ կատարին բարձրացած, որ տարուբերվելիս փակվում-բացվում է՝ ազատություն տալով տեսարանին ներկա հնդկացիների զգացմունքներին: ...Ինչ-որ վարսեր են անցնում՝ հյուսվելով փոթորկվող ջրահոսքին: Մի քանի կաշվե գոտիների համարձակությունն է ծփում ջրապտույտի երեսին՝ խճճվելով հեղեղի արմատախիլ արած ինչ-որ թփերի մեջ»³¹:

Իկասայի գրչի ներքո կերպարը, մակդիրը, հեզնական ակնարկը կայծկլտում են ողջ ուժով: Կարելի է ասել, որ «Ուսասիպունգո»-ի հեղինակն անընդունակ է կիսաձայն խոսելու, որովհետև նրա հոգին բռնությունների աշխարհի հյուրն է, և բառերը մոզական ուժով են դուրս թռչում նրա բերանից:

Իկասայի ամենագործող ու կոշտ ռեսուրսներից մեկն էլ սարկազմն է: Հեզնական երակը նրա ստեղծագործության սկզբից մինչև վերջ շոշափելի է. այն ձաղկող է ու ամսպառ: Կարելի է ասել, որ միայն այս դաժան երգիծանքի միջոցով է հեղինակը նայում ամեն ինչին: Նա նախատում է սոցիալական խամաճիկների խմբին՝ բողոքելով նրանց արատների դեմ, նրանց նկրտումների ճղճիմության, նրանց սրտի չորության դեմ, կամ էլ բարյացակամորեն կանգ է առնում նվաստների կյանքի վրա, որ նրանց ծիծաղելի կողմերը ցույց տա, նրանց աղքատությունն ընդգծի ու ավելի ուռճացնի նրանց ցավը:

²⁹Տե՛ս **Pérez G.**, Pensamiento y literatura del Ecuador: crítica y antología, Bogota, Editorial Casa de la Cultura Ecuatoriana, 1972, p. 335.

³⁰Տե՛ս **Pérez G.**, La novela hispanoamericana: historia y crítica, Bogota, Editorial Oriens, 1982, p. 314.

³¹www.books.google.com, Jorge Icaza, Huasipungo, Fundación Editorial el perro y la rana, 2006, p. 72.

Գերիշխում են մետաֆորները, շքեղ պատկերները և բնության անձնավորումը՝ «Ինչպե՞ս է լաց լինում գետը»³², Իկասան նկարագրում է գետի վարարումը, որն ավերում է տեղաբնիկների բազմաթիվ կացարաններ: Այս երկու տարրերը՝ փաստագրականը և գեղարվեստականը, միևնույն նպատակադրման արդյունքն են՝ հասնել սոցիալական բողոքի այնպիսի արտահայտման, որն ազդի ընթերցողի վրա:

2.3. ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՎԱԿՔԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

«Ուսասիպունգո»-ում կերպարը հնդկացիական վեպին բնորոշ հատկանիշներ է ստանում: Առավելությունն այն է, որ վեպի այս տեսակը կենտրոնանում է հավաքական կերպարի ստեղծման ձևի վրա՝ առանց որևէ անհատական բնորոշման: Այդ իսկ պատճառով ստեղծագործության մեջ չորս հավաքական կերպար կա՝ տեղաբնիկներ, կառավարող իշխանավորներ, կղերականներ և լատիֆունդիստներ³³:

Բուրգի ստորոտում հնդկացիներն են, որոնք, ի տարբերություն կալվածատերերի, և հոգևորականների, չունեն որևէ իրավունք և, որպես կանոն, համարվում են կալվածքի կենդանիների մի տեսակ: Կալվածատիրոջ համար նրանք զուտ աշխատուժ են, երբեմն էլ՝ հաճույքի առարկա: Տեղաբնիկը ստեղծագործության հիմնական կերպարն է. նա է գոհը մյուս երեք հավաքական կերպարների և հասարակության կողմից մոռացված և անտեսված էակ է: «Ուսասիպունգո»-ում սպիտակները սրիկաների կարծրատիպեր են, այլասերված ու չար: Սակայն հնդկացի հերոսների նկարագրությունը ևս ցավալիորեն խղճուկ ուրվագիծ ունի: Նույնիսկ Անդրեսը, ով հեշտությամբ կարող էր դառնալ հետաքրքիր կերպար, չի անհատականանում, չի առանձնանում մյուսներից: Նա ատում է ինքն իրեն, քանի որ չի տեսնում ուրիշ ոչ ոքի, ում կհանդգնի ատել: Հեղինակը «ցույց է տալիս» հնդկացիների արժեզրկված լինելու զգացումը: Պատկերն ավելի ամբողջական է դառնում, երբ գոյության պայքարում շոշափվում են բնագոյային, անասնական հարաբերությունները:

Այս ստեղծագործության կերպարները զուրկ են անհատականությունից, սակայն հեղինակը դա անհրաժեշտություն չի համարում, որպեսզի օբյեկտիվ նկարագրի այս սուբյեկտիվ իրականությունը:

2.4. ՀՆԴԿԱՑՈՒ ԼԵՁՈՒՆ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ուսասիպունգո»-ի դեպքում Իկասան ներկայացնում է հնդկացու լեզուն, որը կեչուերեն բառերին ու արտահայտություններին միախառնված խսպաներեն է և վեպի վերնագրով ակնարկում է, որ վեպի հիմքը հնդկացու մասին պատմությունն է: Որոշ կեչուերեն բառեր՝ *taita* (հայր), *guagua* (երեխա), *shugua* (գող), *ñucanchic* (մենք), հնդկացիները ճիշտ գրում և լայնորեն կիրառում են: Անկասկած, կեչուերենում քիչ են ամբողջովին «արտասանվող» արտահայտությունները, որոնք ակնհայտ տարբերություններ ստեղծեն հնդկացու ու սպիտակամորթի խոսվածքների միջև:

³²Նույն տեղում, էջ 100:

³³Տե՛ս *Uslar Pietri A.*, Breve historia de la novela hispanoamericana, Caracas, Mediterráneo, 1974, p. 141.

«Ուսսիպունգո»-ն դուռ է բացում դեպի հնդկացիական աշխարհ՝ տեսնելու ակունքներից եկող նրա ինքնությունը: «Ուսսիպունգո»-ի խապաներեն-կեչուերեն մեջբերումները տեսարանի հետ հնարավորություն են ընձեռում ներկայացնելու հնդկացու միկրոկոսմոսը, նրա պատմությունը, որը, դժբախտաբար, լի է տխրությամբ, բայց միևնույն ժամանակ այն սիրո և քերմության պատմություն է:

Ստեղծագործության վերջում հեղինակը հեռանում է, և հնդկացին ոտքի է ելնում՝ «դեկավարելու» վեպի շարունակությունը: Այս պահը հասունանում է, երբ Չիլիկինգան արտաբերում է ազատարար խոսքը՝ «¡Nucanchic huasipungo!»:

– Ուսսիպունգոն մենք ենք»³⁴:

Իկասան թույլատրում է հերոսին դառնալ դիմադրության կոչի հեղինակը, ըստ որի՝ հնդկացին ավելին է, քան վայրի տեղաբնիկը, ում առաջնորդ է հարկավոր: Այստեղ հստակ տեսնում ենք գաղութային ռասայական կոչի մի հատված, որը նպատակաուղղված էր հավատացնելու բոլոր բնիկներին, որ իրենք ստորակարգ են ու եությամբ «անհաստատ»: Սակայն Չիլիկինգան իր կոչով փոշիացնում է այդ ու լիովին ազատագրվում:

«Ուսսիպունգո» և Ս. Ալեգրիայի «Ընդարձակ և օտար աշխարհում» ստեղծագործություններով հնդկացիական վեպը սպառում է իրեն: Չնայած տեղաբնիկը գրեթե միշտ ներկա է հետագայում ստեղծված երկերում, այնուամենայնիվ ոչ ոք Իկասայի և Ալեգրիայի պես չի արժարժում հնդկացու հարցը, նրա ինքնության խնդիրները, չի պատկերում հնդկացու աշխարհը: 20-րդ դարի 40-ական թվականներից սկսած՝ սոցիալական վեպերում հնդկացին մղվում է երկրորդ-երրորդ պլան: Աստուրիասի, Վարգաս Լյոսայի, Գարսիա Մարկեսի ստեղծագործություններում շեշտը դրվում է տիրող հասարակարգի դեմ բողոքի վրա: Ոչ միայն հնդկացին և խառնածինը, այլև սպիտակամորթը, մարդն ընդհանրապես դառնում են բռնատիրական համակարգի, հասարակության մեջ դրսևորվող աններդաշնության զոհ: Գերխնդիրը դառնում է մարդը: Սա է պատճառը, որ 20-րդ դարի 40-ական թվականներից լատինաամերիկյան վեպն արժարժում է ոչ թե «տեղական նշանակության», այլ համամարդկային թեմաներ ու խնդիրներ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՊԻՑ ԱՆՑՈՒՄԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՊԻ

3.1. ՉՈԼՈՆ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԻՊ

Իկասայի ստեղծագործության կարևոր թեմաներից մեկը ռասայական խտրականության խնդիրն է: Հնդկացիներից, խառնածիններից և սպիտակամորթներից կազմված սոցիալ-ռասայական բուրգը առաջ է քաշում դեռևս չհաղթահարված խնդիրներ՝ կոնֆլիկտային հարաբերություններ, լարվածություն, որոնք ծագում են չլոնների և հնդկացիների մեծամասնության միջև՝ նրանց մոտ առաջացնելով անորոշություն, հուսահատություն և մեռության զգացողություն, ինչն էլ իր հերթին լատինաամերիկյան տարածաշրջանի բնակչին կանգնեցնում է անելանելիության եզրին:

Չոլոյի կարևորությունը Իկասայի երկերում բացառիկ է: Հնդկացու և եվրոպացու խառնուրդը հանդես է գալիս հոգեբանական խնդիրներով և իր

³⁴ www.books.google.com, Jorge Icaza, Huasipungo, Fundación Editorial el perro y la rana, 2006, p. 124.

ծագման ողբերգությամբ: Նրան նայում են խորշանքով, և հենց այս պատճառով է, որ չլուծ դառնում է դավաճան կամ իր հնդկացիական արմատները մերժող մեկը: Մինևույն ժամանակ նա սպառնալիք է ազնվականության տնտեսական անվտանգության ու հասարակական հեղինակության տեսակետից: Իկասան, ներթափանցելով խնդրի մեջ, բացահայտում է լատինասամերիկացի մարդ տեսակի բարդ հոգեբանությունը: Գրականագետ Քլոդ Քուֆոնի այն հարցին, թե ինչու է Իկասան «Ուասիպունգո»-ից հետո իր հաջորդ վեպերը նվիրել խառնածիններին, վերջինս պատասխանել է. «Ոչ թե մեկ, այլ հարյուր վեպ պետք է լինի Ամերիկայի մետիսների մասին, ովքեր, անկասկած, նոր աշխարհի կառուցողներն են: Պետք է հասկանալ, որ տարբեր ռասսաների միաձուլումը, որ էկվադորում «չլու» անունն է ստացել, չի վերաբերում միայն արյան միախառնմանը, պատմությունների միախառնմանը, այլ նաև մշակույթի միաձուլմանը... Այս ձևափոխությունը շատ կարևոր է գրականության և արվեստի համար, որովհետև մեզ տալիս է թերևս այն, ինչը պակասում էր լատինասամերիկյան առաջին ստեղծագործություններում. կերպարներ՝ իրենց ուրույն հոգեկան արձագանքով, կերպարներ, որ, լինելով խորապես ազգային կամ տարածաշրջանային, համամարդկայինի հանդեպ իրենց հոգևոր ձգտումն ունեն... Այդ պատճառով ես հետևողականորեն ջանում եմ իմ հաջորդ վեպերում ներկայացնել այդ հոգևոր կոնֆլիկտը, այդ ներքին անհավասարակշռությունը կերպարների մեջ»³⁵:

«Փողոցներում», «Խառնածիններ», «Կես դար մթության մեջ» վեպերը, պատկերելով սոցիալական բողոքը, կենտրոնանում են «խառնածին» անհատի կերպարի վրա: «Ուասիպունգո»-ի հավաքական հնդկացիական հասարակությունն անհետանում է՝ տեղը զիջելով զարգացած անհատներին, որոնք արդեն մարդու գոյության ողբերգությունն արտահայտում են փիլիսոփայորեն: Այս ստեղծագործություններում տեսնում ենք այն կարոտն ու հիասթափությունը, որոնք, չլույսի եությանը ներծծված, արգելում են նրան հասնելու հոգեբանական ներդաշնակության: «Յեղինակը «բարոյականության դասեր է» տալիս իր հերոսներին: Վերջիններս անցնում են զղջման, ինքնամաքրման ճանապարհը, նույնիսկ արմատապես վերանայում են իրենց գործած սխալները: Իկասայի նպատակն է ցույց տալ անհատի ողբերգությունը, ով չունի աշխարհընկալման հստակ կողմնորոշում, դուրս է ընկել միջավայրի ու իր դասակարգի սահմաններից»³⁶: Այս խնդիրներն իրենց ամբողջական տեսքն են ստանում Իկասայի վերջին՝ «Չույա Ռոմերո ի Ֆլորեսը» վեպում, որը հստակ ընդգծում է հեղինակի ստեղծագործական նոր միտումը՝ սոցիալական վեպից անցումը հոգեբանական վեպի:

3.2. ՃՆՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ ԽՈՐԻՍԵ ԻԿԱՍԱՅԻ «ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ» ՎԵՊՈՒՄ

«Փողոցներում» վեպն արտացոլում է այն հասարակական-հոգեբանական խնդիրները, որոնք բնութագրում են չլույսի իրական կյանքը:

³⁵ Տե՛ս www.mshs.univ-poitiers.fr/crla/contenidos/.../intro_8.pdf, INTRODUCCIÓN DEL COORDINADOR

³⁶ **Былинкина М.**, Современная литература Латинской Америки, Москва, Академия наук СССР, 1975, стр. 103.

«Ուսսիպունգո» վեպից երկու տարի անց լույս տեսած այս ստեղծագործությունը 1935 թվականին «Տարվա վեպ» ազգային մրցանակին արժանացավ: Այս վեպում Իկասան քայլ է անում դեպի հոգեբանական արձակը՝ բացահայտելով մետիսի կերպարը, նրա ներքին աշխարհը: «Առաջին անգամ Իկասան շոշափում է չոլոյի կողմից հնդկացու հետ իրեն նույնացնող ամեն բանի մերժման թեման: Այստեղ երևում է մետիսի՝ իսպանական կոնկիստայի ժառանգի համար տրավմատիկ իրողություններից մեկը: Չոլոյի բնական ռեակցիան է խուսափել, որ իր մեջ հնդկացուն բնորոշ հատկանիշներ տեսնեն՝ ընդգծելու համար տարբերությունը՝ արդյունքում ավելի լավ վերաբերմունք ստանալու և հասարակության մեջ տեղ գտնելու համար»³⁷:

Հեղինակը հեռանում է կերպարների հարաբերական անբովանդակությունից, անհատ է ձևավորում՝ ի դեմս Խատիվայի, բայց միևնույն ժամանակ պահպանում է լատինաամերիկյան սոցիալական վեպի կարևոր առանձնահատկություններից մեկը՝ հավաքական կերպարի առկայությունը:

3.3. ԹԵՐԱՐԺԵՌՈՒԹՅԱՆ ԲԱՐԴՈՒՅԹԸ «ԽԱՌՆԱԾԻՆՆԵՐ» ԵՎ «ԿԵՍ ՂԱՐ ՄԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ՎԵՊԵՐՈՒՄ

«Խառնածիններ» վեպում Իկասան երկու գործող անձանց կյանքի պատմության միջոցով պատկերում է ֆեոդալական կարգերի քայքայման ողբերգությունը: Մնկկացող սպիտակամորթ կալվածատերոջ և նոր ձևավորվող էկվադորյան ազգի հիմքը հանդիսացող մետիսի հարուստ պատմական հնարավորությունները ներկայացնում են վեպի ժամանակը³⁸: Այնուամենայնիվ, «Խառնածիններ» վեպի հիմնական թեման այս կերպարներին բնորոշ հիասթափությունն է, ինչը ստեղծագործությունը համամարդկային է դարձնում:

20-րդ դարի առաջին կեսին չոլոյի կարգավիճակը Կիտոյում համարվում էր ամոթալի, քանի որ ըստ այդ ժամանակաշրջանում գերակայող արժեքների՝ չոլո լինելը սահմանակից էր հնդկացու կարգավիճակին, ինչը ինքնին արդեն ընկալվում էր որպես բիծ:

«Կես դար մթության մեջ» վեպում Իկասան շարունակում է չոլոյի՝ հասարակական զոհի հոգեբանական պարտության իր խորաթափանց վերլուծությունը: Այս ստեղծագործության մեջ հեղինակը կենտրոնանում է չոլոյի՝ իր իսկ ռասայական խմբից առանձնանալու փորձի վրա: Իր հերոսների աշխարհը անբարոյականությամբ, սեռական այլազանությամբ, միջռասայական նախապաշարմունքներով ներկայացնելով՝ Իկասան օգնում է պատկերացում կազմելու տարատեսակ չոլոների հավաքական կերպարի մասին: Նրանց ընդհանուր առանձնահատկությունն է հակազդել իրենց սեփական ինքնության վրա՝ հնդկացիների կամ այլ ռասայական խառնուրդների հետ միասին:

³⁷Տե՛ս El mestizaje en la novelística de Jorge Icaza, https://repositorios.tdl.org/.../ORTIZ_CLAUDIA, p.148-149.

³⁸Տե՛ս Былинкина М., Современная литература Латинской Америки, Москва, Академия наук СССР, 1975, стр. 108.

3.4. ՉՈՒՅԱ ՌՈՍԵՐՈ Ի ՖԼՈՐԵՍԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ

1958 թվականին Խորխե Իկասան գրում է իր վերջին վեպը՝ «Չույա Ռոմերո ի Ֆլորեսը», որը հերթական անգամ լուսաբանում է ժամանակակից էկվադորյան հասարակության՝ ներքին երկվությունների մեջ պառակտված զոհի՝ չոլոյի հոգեբանական խնդիրները: Իր հերոսի՝ մի աննշան քաղաքացիական աշխատակցի միջոցով Իկասան ի ցույց է դնում արտոնյալ դասի ուժգին թշնամանքը անպատկառ չոլոյի նկատմամբ, որը ձգտում է բարելավելու իր հասարակական դիրքը՝ սահմանափակ իշխանությամբ փորձելով փոխել էկվադորյան հասարակական կառուցվածքը: 20-րդ դարում լատինաամերիկյան իրականության մեջ չույան³⁹ միջին խավի ներկայացուցիչ է, անպայման խառնածին, որն ամաչում և թաքցնում է իր հնդկացիական արմատները, ամեն կերպ ձգտում է հասնելու հասարակական բարձր դիրքի, ամեն ինչում նմանակում է ազնվականներին և ունևոր մարդկանց, փորձում է ներթափանցել նրանց միջավայր⁴⁰: Չույայի կերպարը, որը դասական է համարվում էկվադորյան գրականության մեջ, այս ստեղծագործության մեջ իր ամբողջական տեսքով է հանդես գալիս: Իկասան նրան ներկայացնում է որպես երկու՝ իսպանական ու հնդկացիական ռասսաների բարդ ու հակասական պտուղ, ռասսաներ, որոնք միավորվել են նոր կազմավորվող հասարակության քառսային միջավայրում: Ի հայտ եկած սկզբունքները քրքրում են չոլոյական հոգին ներքին պայքարի ժամանակ, որը հեղինակը ռեալիստորեն է պատկերել:

Իկասան առավել խորությամբ, քան իր որևէ այլ ստեղծագործության մեջ, քննում է էկվադորցի չոլոյի անհատական և հավաքական հոգեբանությունը՝ որպես ամերիկացի տեսակը կազմողների հիմնարար մաս⁴¹:

Իկասայի այս վեպը թեմատիկ սինթեզ է, որը գրողն աստիճանաբար զարգացնում է տարբեր տեսանկյուններով՝ սկսած «Ուասիպունգո»-ից, արժարժեքով մասնավորապես բնության ու էկվադորի մեծամասնության՝ խառնածինների ճակատագրի թեման: Բայց տվյալ ստեղծագործության մեջ վիպասանին ամենից շատ հետաքրքրում է չոլոների բարդ իրականության հոգեբանական և գաղափարախոսական զննությունը:

Եզրակացություններ

1. 20-րդ դարասկզբի համաշխարհային և մասնավորապես Լատինական Ամերիկայի պատմական իրադարձությունները նոր էջ բացեցին այդ ժամանակաշրջանի լատինաամերիկյան գրականության մեջ: 20-րդ դարի 20-ական թվականներից սկսած՝ լատինաամերիկյան գրողների ստեղծագործական որոնումների նպատակն է դառնում ազգային ինքնության փնտրտուքի գաղափարը: Այս փնտրտուքին մասնակից դարձավ նաև Խորխե Իկասան:

³⁹«Չույա» բառը ծագում է կեչուերենից և նշանակում է կենտ:

⁴⁰Տե՛ս **Икаса Х.**, Человек из Кито, Москва, Художественная литература, 1966, стр. 6.

⁴¹Տե՛ս <http://revista-iberoamericana.pitt.edu/ojs/index.php/iberoamericana/article/viewFile/5065/5223>, p. 724.

2. 20-րդ դարի 20-30-ական թվականներին գրված վեպերը հանդես եկան տարբեր անվանումներով՝ հակահմպերիալիստալկան, կրեոլական, ռեզինալիստական և այլն: Դրանք բոլորն էլ անդրադառնում էին լատինաամերիկյան երկրներում տիրող սոցիալ-քաղաքական ծանր իրավիճակին և տեղաբնիկների, թշվառ ու հալածված զանգվածների ողբերգության պատկերմանը: Արդյունքում գիտական և քննադատական գրականության մեջ այդ ժամանակաշրջանում գրված ստեղծագործությունները ստացան «սոցիալական վեպ» սահմանումը: Լատինաամերիկյան սոցիալական վեպի առանձնահատկություններն են սոցիալական խնդիրների ներկայացումը, հասարակության սոցիալական ու բարոյական շերտավորման պատկերումը, բնության երևույթների մանրամասն նկարագրումը, հավաքական, տիպական կերպարների առկայությունը: Շեշտը դրվում էր հիմնականում բնական, և սոցիալական միջավայրի պատկերմանը՝ ի վնաս անհատ կերպարների խոր բացահայտման:
3. Լատինաամերիկյան գրականության մեջ սոցիալական վեպի մասնավոր արտահայտություններից են «հնդկացիական վեպ» եզրույթով բնորոշվող ստեղծագործությունները, որոնց հիմնական նպատակը ազգային ինքնության որոնումն ու սեփական արմատների ու բնիկ մշակութային ավանդույթների պահպանումն էր: Կլորինդա Մատո դե Տառնեթի՝ 1889 թվականին լույս տեսած «Բնավեր հավքեր» գիրքը հնդկացիների մասին գրականության մեջ նոր փուլ բացեց, որով հնդկացիների էկզոտիկ կյանքը պատկերելու ավանդույթը խախտվեց: Հնդկացիական վեպի հիմնական միտումը հնդկացու դաժան, ողբերգական իրականության պատկերումը դարձավ:
4. Խորխե Իկասայի «Ուասիպունգո» հնդկացիական վեպը լավագույնս արտացոլեց սպիտակամորթների կողմից անմարդկայնորեն շահագործվող տառապյալ հնդկացու թեման: Հնդկացիական վեպին բնորոշ կեչուական քնարերգության ազդեցությունը, որն արտացոլվում է տեղաբնիկ համայնքի երգ-պոեմների միջոցով, և էթնիկ մշակույթի առասպելական տարրերի առկայությունը, ռեալիստորեն պատկերելով հնդկացու աշխարհը, բացահայտում են վերջինիս ինքնության խնդիրներն ու արժարժույթն հնդկացու սոցիալական ու անհատական ողբերգության հարցը սոցիալական տիպական միջավայրում:
5. «Ուասիպունգո» վեպից հետո գրված սոցիալական վեպերում հնդկացու հարցը մղվում է հետին պլան: Իկասայի նոր ստեղծագործություններում հիմնական թեման դառնում է ռասսայական խտրականության հարցը, ինչի հետևանքով ծնվում է հոգեբանական խնդիրներով ու բարդույթներով տառապող խառնածինի՝ չլոլի կերպարը:
6. «Փողոցներում», «Խառնածիններ», «Կես դար մթության մեջ» և «Չույա Ռոմերո ի Ֆլորեսը» վեպերում Իկասան քննության է առնում չլոլի բարդ անհատականության ձևավորման պատճառներն ու հանգամանքները: Ներքին մենախոսության միջոցով կերպարները խորհում են ոչ միայն սոցիալ-քաղաքական հարցերի, այլև դրանց հետևանքով առաջացած թերաթեքության բարդույթի և առհասարակ մարդկային ինքնության

խնդիրների շուրջ: Նկատվում է հեղինակի ստեղծագործական էվոլյուցիան՝ սոցիալական վեպից անցումը հոգեբանական վեպի:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. **20-րդ դարի 20-30-ական թվականների լատինաամերիկյան վեպի առանձնահատկությունները**, «Բանբեր. գիտական աշխատություններ», Վանաձոր, Արմինֆո, 2007, էջ 99-104:
2. **Խորխե Իկասա. ստեղծագործության ուրվագծեր**, «Գարուն», Եր., 2011, թիվ 9, էջ 56-62:
3. **Լատինաամերիկյան հնդկացիական վեպը**, «Համատեքստ-2012», Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 221-231:
4. **Լատինաամերիկյան սոցիալական վեպը**, «Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», Եր., Միսմա ՍՊԸ, 2015, էջ 131-139:
5. **Խորխե Իկասայի «Փողոցներում» վեպը**, «Կանթեղ. գիտական հոդվածներ», Եր., Աստղիկ հրատ., 2015, թիվ 2 (63), էջ 13-25:
6. **Ինքնության որոնումները Խ. Իկասայի «Չույա Ռոմերո ի Ֆլորես» վեպում**, «Գրականության արդի հիմնախնդիրներ» (Երիտասարդ գիտնականների 2015 թ. միջբուհական գիրաժողովի նյութեր, ԵՊԼՀ), Եր., Լինգվա հրատ., 2015, էջ 172-184:

Казарян Кристина Лаертовна

Хорхе Икаса и латиноамериканский социальный роман

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.07 - “Зарубежная литература”.

Защита диссертации состоится 29-го апреля 2016 г., в 14:00 на заседании специализированного совета ВАК 003 Армянской и зарубежной литературы имени М. Абегяна НАН РА по адресу: ул. Григора Лусаворича 15, г. Ереван, 0002, Республика Армения.

РЕЗЮМЕ

Работа посвящена исследованию латиноамериканского социального романа 20-30 годов 20 века и творчества одного из его ярких представителей эквадорского писателя Хорхе Икасы. Многие писатели, в том числе и Хорхе Икаса, в своих произведениях пытались отобразить основные социальные проблемы континента и трагичную действительность населяющих его коренных племен.

Армянские критики нередко обходили стороной вопросы, связанные с латиноамериканской литературой 20-30 годов 20 века. Впервые на суд армянского читателя выносятся исследование творчества писателя Хорхе Икасы, в частности системный анализ романического стиля, а также анализ основных тенденций латиноамериканского романа 20-30 годов 20 века, что помогает составить цельную картину представлений о романах, написанных на испанском языке, вообще.

Предметом исследования являются романы Хорхе Икасы в контексте латиноамериканского социального романа в целом.

Цель работы – осветить особенности латиноамериканского романа, и в частности, особенности индианистского романа.

Задача исследования заключается в том, чтобы выявить и оценить особенности творчества Икасы в контексте латиноамериканского социального романа, а также показать этапы развития творчества писателя – переход от социального романа к психологическому.

Работа состоит из введения, трех глав, выводов и списка использованной литературы. Во введении представлены актуальность темы исследования, разработка и задачи исследования.

В первой главе (“Особенности латиноамериканского социального романа”) представлены особенности латиноамериканского романа. В ней также освещается роль и значение индианистского романа в контексте социального романа вообще, и отмечается роль Хорхе Икасы в поле зрения эквадорского романического пространства.

Во второй главе (Индианистский роман “Уасипунго”) представлен анализ романа Хорхе Икасы “Уасипунго”, выявляются тенденции произведения, его структурные, языковые и

стилистические особенности, описываются герои романа и вырисовывается их собирательный образ. В этом произведении автор описывает полную картину несправедливостей и эксплуатации, несчастную жизнь коренного жителя.

В третьей главе (“Переход от социального романа к психологическому”) анализируются следующие произведения Икасы “На улицах”, “Метисы” “Полвека в темноте”, “Человек из Кито”. В этих произведениях объектом исследования Икасы является личность, которая постоянно находится на пути поиска истины и самосознания.

В ходе исследования мы пришли к следующим выводам:

- Исторические события, произошедшие как в мире в целом, так и в Латинской Америке в начале 20 века, открыли новую страницу в латиноамериканской литературе этого периода. Начиная с 20 годов 20 века основной целью латиноамериканских писателей становится идея поиска национальной самостоятельности. К этому процессу был непосредственно причастен и Хорхе Икаса.
- Романы, написанные в 20-30 годах 20 века публиковались под различными названиями – антиимпериалистическими, креольскими, региональными и др. По сути, все они освещали тяжелое социально-политическое положение латиноамериканских стран, описывали картину убогой, полной лишений и трагичной жизни эксплуатируемого народа. В результате чего в научной литературе и критике произведения, написанные в этот период, получили название “социального романа”. Особенности латиноамериканского социального романа – подробное описание природных явлений, освещение социальных проблем, наличие собирательных образов. Однако более всего внимание акцентировалось на описании естественной и социальной среды в ущерб более полному выявлению личности героев.
- Одним из частных примеров социального романа в латиноамериканской литературе являются произведения, определяемые термином “индианистский роман”, целью которых является поиск путей национальной самостоятельности, сохранение собственных корней и культурных традиций. Книга Клоринды Мато де Гарнер “Птицы без гнезда”, вышедшая в свет в 1889 году, стала началом нового этапа в литературе об индейцах, и нарушила традиционное описание экзотической жизни индейцев. Основной тенденцией индейского романа стало описание жестокой и трагичной действительности индейцев.
- Роман “Уасипунго” Хорхе Икаса наилучшим образом отобразил тему нечеловеческой эксплуатации индейцев представителями белой расы. Влияние мелодичности, характерное для индейского романа, выраженное посредством песен-поэм коренного населения, наличие элементов устного народного творчества местной культуры,

реальное описание внутреннего мира индейца, позволяют выявить проблемы его самосознания и обсудить вопрос индейцев в типичной социальной среде.

- В социальных романах, написанных после “Уасипунго”, проблема индейца отходит на второй план и не представляет особой важности. Основной темой произведений Икаса становится вопрос расовой дискриминации, в результате чего рождается образ чоло – личности с психологическими проблемами и комплексами.
- В романах “На улицах”, “Метисы” “Полвека в темноте” и “Человек из Кито” Икаса исследует причины и условия формирования сложной личности чоло. Посредством внутреннего диалога герои романов обсуждают не только социально-политические вопросы, но и возникший в результате этого, комплекс неполноценности личности, и вообще вопрос о самосознании личности человека. Постепенно вырисовывается эволюция творчества писателя - переход от социального романа к психологическому.

Kristina Laert Ghazaryan

Jorge Icaza and the Latin-American Social Novel

Dissertation for obtaining the scientific degree of candidate of Philological Sciences, in the specialty of “Foreign Literature” (Specialty Code 10.01.07).

The defense of the dissertation is scheduled for 29 April 2016, at 14:00 pm, at the meeting of the Specialized Council of Armenian and Foreign Literature 003 of the Institute of Literature after M. Abeghyan, NAS RA. Address: 15 Grigor Lusavorich str. 0002, Yerevan, Republic of Armenia.

SUMMARY

The dissertation is devoted to the study of the social novel of the 1920-1930s, which is one of the most important periods in the Latin-American phases, as well as to the analyses of the work by one of the most prominent figures of that period, Ecuadorian writer Jorge Icaza. Many writers, including Jorge Icaza, have tried to depict the overall radical social conflicts on the Continent and the tragic reality of indigenous tribes.

The Armenian critical thinking did not turn to Latin-American literature of the 1920-1930s. For the first time the analysis of the work of the writer Jorge Icaza and the systematic analysis of novel writing in particular, as well as the trends of Latin American social

novel of the 1920-1930s are given to the appreciation of the Armenian reader. And this helps to complete the system of ideas about the Latin-American novel.

The subject matter of the dissertation is Jorge Icaza's novels in the context of the Latin American social novel. The aim of the work is to present the peculiarities of the Latin-American social novel and one of its types the Indian novel. The objective of the work is to identify and evaluate the peculiarities of Jorge Icaza's novels in the light of Latin social novel as well as to show the development of Icaza's works, interpreting the transition from the social to the psychological novel.

The work consists of the introduction, three chapters, conclusion, and bibliography. The introduction contains the relevance of the study, the actuality, and the problematycity.

Chapter one ("The Peculiarities of Latin-American Social Novel") represents the peculiarities of the Latin-American social novel. The role and the significance of the Indian novel are represented in the light of the social novel and are viewed in the field of Jorge Icaza novels.

In Chapter two ("Indian Novel "Huasipungo") the novel Huasipungo written by Jorge Icaza is analyzed; the main trends, structural and linguistic peculiarities, as well as the characters and their collective nature are revealed. Through this work, the author reveals the cruel and unacceptable life of the indigenous, full of illegality and exploitation.

Chapter three ("The Transition from the Social to the Psychological Novel") examines the following novels by Icaza: "In the streets", "Half-blooded", "Half a Life Amazed", "El Chulla Romero y Flores". In these works Icaza's subject matter is of mixed heritage who is always in search of identity and truth. During the investigation we came to the following conclusions:

- The world and particularly the Latin-American historical events of the 20th century opened a new page in the Latin-American literature of that period. Since the 1920s, the main aim of the Latin-American writers has been the idea of searching for the national identity. Jorge Icaza joins this search.
- The novels written in the 1920-1930s were presented by different names: anti-imperial, creole, regional, etc. In fact, they all tried to illuminate the intricate socio-political situation in Latin American countries and depict the tragedy of people, miserable and oppressed masses. As a result, works of this period received the definition "social novel" in the scientific and critical literature. The main peculiarities of the Latin-American social novel are the detailed description of natural phenomena, the presentation of social problems, and the existence of collective characters. However, they put an

emphasis on the description of the natural and social environment, rather than the revelation of the individual characters.

- In the Latin-American literature, a particular expression of the social novel is the so-called "Indian novel", which aims at searching for their roots and national identity as well as preserving native cultural traditions. Clorinda Matto de Turner's "Birds without a nest", published in 1889, opened a new stage in literature about the Indians and this caused changes in the way of depicting the exotic life of the Indians. The main trend of the Indian novel became the description of cruel and tragic reality of the Indians.
- The novel "Huasipungo" written by Jorge Icaza best reflected the suffering of the Indians who were inhumanely exploited by the whites. The influence of the Kechu lyrics typical of the Indian novel which is reflected in the indigenous community through songs and poems and the existence of mythical elements of indigenous culture which realistically depict the Indian world help to analyze the identity of the Indian social problems and raise their question in the typical social environment.
- In social novels written after "Huasipungo," the Indian question was pushed into the background. In Icaza's new works the main topic becomes the issue of racial discrimination, as a result of which a half-blooded cholo, a character suffering from psychological problems and complexes, was born.
- In the novels "In the streets", "Half-blooded", "Half a Life Amazed", "El Chulla Romero y Flores" Icaza examines the causes and circumstances of the formation of cholo's complex personality. Through internal monologue, the characters reflect not only upon the socio-political issues but also upon their inferiority complex caused by the human identity and general issues. There is a gradual transition of the author's creative evolution from the social to the psychological novel.

